

ուրիշ՝ հյութեաց չ մնաւածանմ ։ Անապն ունչ մոռն է տնակացն
շանգութանք ։ ուստի ուր ունենալու մասնաւո՞ւ օւելքար ըստ
առաջ բախուցքի մ մասն ։ Այդքան մասն բախուցք առաջ մասն առաջ մասն ի բախուցք առաջ մասն ։ Այդքան մասն առաջ մասն ի բախուցք առաջ մասն ։



Անդ ընածառակով
ու զի առ պահան
պահան մ հանաւու
այսուն ։ (ՊԲ)

Այս Ասուցքի մեջ

մասն առաջ մասն ։

Ամսոյս 11 ին բուն բարեկենդանի կիւրակէ առաւօտեան 8 ժամն Վաղարշապատում՝ իւր որդու Պ. Կարապետ Կոստանեանցի ընակարանում, կարճատև հիւնդութիւնից յետ առ Տէր փոխեցաւ Աղքամանդրապօլի բազմաշխատ աւագ քահանայ հայր Յովսէ փ Կոստանեանց ի հասակի 64 ամաց:

Նորին Օծութիւն Աւհամիառ Հայրապետն պատուիրեց արժանաւոր յուղարկաւորութեամբ յանձնել Հանդուցելոյ մարմինը հողին: Նոյն օր զինի կէս աւուր երեք եպիսկոպոսունք՝ Ներսէս Սարգիս և Արիստակէս Դաւթեանց ու գրեթէ բոլոր միաբան վարդապետք գիւղի քահանայք և Ճեմարանի երգեցիկ խումբը Հանդուցելոյ տանը Լուացման և հանգստեան կարգը կատարելից յետ հանդիսաւոր յուղարկաւորութեամբ, ի ներկայութեան խուռան բազմութեան ժողովրդեան ամեն գասակարգի տարան հանդուցելոյ մարմինը Ս. Գայիհանէի վանքն, որոյ բակում և որոշած էր թաղել Հանդուցեալին:

14 ին չորեկշաբթի Տեառնընդառաջի օրը պատարագ մատուցուեցաւ փոխանակ Մայր Աթոռոյս Տաճարի Ս. Գայիհանէի վանքի մէջ և կատարուեցաւ այդ օրը առ Տէր փոխեալ Տէր Յովսէ փ աւագ քահանայի օծման և թաղման կարգն, ի ներկայութեան բոլոր միաբանից Սուրբ Աթոռոյս, Ճեմարանի ուսուցչաց և աշակերտաց ու խուռան բազմութեան ժողովրդականաց: Եկեղեցում Սարգիս Սրբազն եպիսկոպոսը համառօտ և ազգու ձառ խօսեց, բնարան առնելով Ս. Աւետարանից Յարոսի աղջկայ յարութեան առթիւ Փրկչի ասած խօսքերը թէ աղջիկը չէ մեռեալ այլ ննջէ: Ատենաբան Սրբազնը թուելով հանդուցելոյ գործերից մի քանիսն յօգուտ եկեղեցւոյ և Ս. Աթոռոյս—յայտնեց, որ հայր Յովսէ փը չէ մեռած այլ ննջում է, մինչեւ կլարթեցնէ նորան Փրկչի հրամանն, որ երջանկութիւն վայելէ նորա երկնային օժեւաններում, և մաղթելով Ասուծմէ որ ոչ թէ արդարութեամբ գատէ, այլ գթութեամբ քաւէ հանդուցելոյ մարդկային մեղքերն և նոգին սրբոյ միսիթարութիւն ցանկալով ստաւորաց վերջացրեց իւր խօսքը: Ապա կատարուեցաւ թաղման կորդը: Հանդուցելոյ մարմինը ամփոփուեցաւ Ս. Գայիհանէի վանքի հիւսիս - արևելիան կողմում ոչ հեռի Տաճարից:

Նոյն օրը Մայր Աթոռոյս սեղանատան ըստ ցանկութեան հանդուցելոյ որդուոյն պատրաստած էր հոգու Ճափ սեղան, որ վայելեցին յուղարկաւորներից բազմաթիւ ամեն գասակարգից,

միաբանութեան հետ միասին։ Աեղանատանն էլ բարեշնորհ Գրիգոր վարդապետն Գառնակերեանց խօսեց համառօտ ճառ։ Հանդուցելոյ աշխատանքները յիշելով յօգուտ ազգային և եկեղեցական հաստատութեանց և Պայր Աթոռոյս, և առաջարկեց բաժակ վասն հանգըստեան հոգւոյ հանդուցելոյն։

Ի Տէր Հանդուցեալ Յովիկ աւագ քահանային Կոստանեանց բնիկ Աղեքսանդրապոլից էր, եկեղեցական դասակարգից։ Նա իւր ուսումն Տէր Յովհաննէս քահանայ Տէր Մարտիրոսեանցի և Յակոբ Շահ - արքասեան վարդապետի մօտ առնելից յետ 1840 թուականին նշանակուում է Աղեքսանդրապոլի մայր եկեղեցում իրեւ ստորին եկեղեցական պաշտօնեայ, բայց մի և նոյն ժամանակ, մինչև քահանայանալը 1857 թ. Մայիսի 16 ն վարում է պետական ատեաններում գրադրի, թարգմանի և գործավարի պաշտօններ և իւր ջերմուանդ ծառայութեան համար այդ պաշտօններում 1853—56 թ. պատերազմի ժամանակ վարձատրուում է արծաթեայ մեդալով։

1857 ին մայիսի 15 սարկաւագ և 16 ին քահանայ ձեռնադրուում է ներկայ Վեհափառ Հայրապետից։ Այս ժամանակից սկսում է հանդուցեալը գործել մինչեւ ցմահ ամեն ազգային և եկեղեցական, թէ վարչական և թէ ուսումնարանական գործերում Աղեքսանդրապոլի և սորա վիճակի։ Իւր ձեռնադրութեան իսկ տարին հանդուցեալը նշանակուում է քարտուղար հոգեեոր Կառավարութեան և այնուհետև գործում է նոյն կառավարութեան մէջ իրեւ անդամ, շատ տարիններ և իրեւ նախանդամ, յաջորդի պաշտօնով։ Իրեւ գործունեայ և ազգեցութիւն ունեցող անձն նպաստում է Աղեքսանդրապոլի թէ մայր և թէ այլ եկեղեցեաց շինութեանց։ Հանդուցեալը շատ աշխատեց Արդութեան գվարոցի գումարների և նորա բացման համար էր։ Վարեց շատ տարիններ նոյն և այլ գվարոցների հոգաբարձութեան և տ'սչովթեան պաշտօններ էլ ինչպէս և հայոց լեզուի ու կրօնի ուսուցչի պաշտօն պետական գաւառական գվարոցում։ Հանդուցելոյ աշխատութեանց գլխաւորներից մէկն էլ էր Հառիճեան ընկերութեան կազմելը։ Հառիճոյ վանքի նորոգութիւնն և նորա բակում կանգնած գվարոցն՝ որ պահպանուում էր ընկերութեան և մասամբ էլ հանդուցելոյ անձնական միջոցներով։

Հոգեեոր բարձրագոյն իշխանութիւնը միշտ ուշադրութեան առած է հանդուցելոյ եռամնին ու աշխատութիւնն թէ վիճակային։ թէ ուսումնարանական և թէ Ս. Աթոռոյս օգտին ծառայող գործերի մէջ, և վարձատրած է լստ արժանաւոյն։ Սինօդը բազմիցս շնորհակալութիւն յայտնած է հանդուցելոյն։ Երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսը շնորհած է հանդուցելոյն Խարա գիլոն, Լանջական խաչ, Կամլակա և աւագ քահանայութիւն։ Իսկ ներկայ Վեհափառ Հայրապետը ականակուու լանջական խաչ։ Հանդուցեալն իւր փորձառութեամբ գործունեւութեամբ և անխոնջ աշխատափրութեամբ հոգեեոր իշխանութեան առանձին ուշագրութեան արժանացած էր։

Տէր լուսաւորեսցէ զհոգի հանդուցելոյն-